ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվարների 3-րդ խումբ

Թեմա՝ Հեքիաթի ուսուցողական դերն ու նշանակությունը տարրական դասարաններում

Հետազոտող՝ Անահիտ Զաքարյան

Ղեկավար՝ Վերոնիկա Բաբաջանյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Թեմայի արդիականությունը

3. Հեքիաթը որպես հետազոտման առարկա

4. Հեքիաթի ուսուցման նպատակն ու խնդիրները

5. Հեքիաթի կրթադաստիարակչական արժեքը

6. Հեքիաթը որպես ուսոցման արդյունավետ միջոց

7. Հեքիաթի ուսուցումը տարրական դասարանում

8. Վերլուծություն

9. Եզրակացություն

10. Օգտագործված գրական

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Հեքիաթի ուսուցողական դերն ու նշանակությունը տարրական դասարաններում>>

հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր առաջ խնդիր է դրված հնարավորինս բազմակողմանի ուսումնասիրել հեքիաթը՝ գրական նյութը, որպես երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցության զարգացման անփոխարինելի միջոց:

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատաատծված ստեղծագործություններից են: Դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում: Սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և իրենց անմիջականությամբ, պարզությամբ, լավատեսությամբ ու գրավչությամբ հուզել ընթերցողներին: Տարրական դասարանների «Մայրենի»-ի դասագրքերում տեղ գտած հեքիաթների հիմքը նույնպես մարդկային կյանքն է՝ իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով:

Հայ ժողովրդական հեքիաթների մի զգալի մասը հյուսվել է ազգային-ստեղծագործական հիմքով և տարբերվում է ուրիշ ժողովուրդների հեքիաթներից՝ լեզվով, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով ու հերոսների հոգեկան կերտվածքով: Տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում զետեղված են ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև դրանց գրական մշակումներ՝ ընկերասիրության ու հավատարմության, աշխատանքի ու աշխատասիրության, ագահության, խորամանկության վերաբերյալ:

Կրտսեր դպրոցականներին պետք է տեղեկացնել, որ ժողովրդական հեքիաթների լավագույն մշակումներ են կատարել Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ստ. Լիսիցյանը, Ստ. Զորյանը, Մ. Կորյունը և ուրիշներ: Իսկ ո՞վ կարող է ասել, թե ե՞րբ է ծագել հեքիաթը, երևի մարդ արարածի բառ ու բանի, նրա աշխարհայեցողության, մտքի ու երևակայության, ձգտումների ու երազանքների ձևավորման պահից: Ժողովրդի սիրտը, միտքը, փիլիսոփայությունը, հանճարը արտացոլվում են նրա ստեղծած հեքիաթների մեջ: Հեքիաթ ստեղծող ժողովուրդն անմահ է: Հետևաբար՝ հեքիաթն էլ նրա հետ միասին մնում է հավերժ: Հեքիաթն էլ ունի իր «կյանքի պատմությունը». ի՞նչ պայմաններում է ծնվել, ի՞նչ առիթով է կրկնվել, որո՞նք են նրա կենսական, այժմեական նշանակությունն ու ազդեցությունը: Դարեր շարունակ մայրիկներն ու տատիկները հեքիաթների միջոցով փոքրիկներին ներարկել են սեր՝ բնության, մարդու, հայրենիքի, կենդանիների ու թռչունների նկատմամբ: Դրանցում արտաացոլվել են մարդկանց

առօրյան, կենցաղն ու աշխատանքը: Որքա՞ն հրաշալի հեքիաթներ են հյուսվել կենդանիների, թռչունների և բնության մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գեղարվեստական երկի, այս դեպքում հեքիաթի միջոցով դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Դեռևս մեր նախնիները երեխաների դաստիարակության և զարգացման նպատակով դիմել են պատմությունների ու հեքիաթների օգնությանը՝ չշտապելով պատժել երեխային որևէ սխալ արարքի համար: Արդի ժամանակներում նմանատիպ մոտեցումներ կիրառվում են նաև մասնագետների կողմից, որոնք հեքիաթը դիտարկում են որպես երեխաների հետ աշխատանքի լավագույն միջոց, որը զարգացնում է երեխայի ներքին
աշխարհը, ապաքինում հոգին, տալիս գիտելիքներ կյանքի մասին:
Եվ ուրեմն հեքիաթների դերը ինչպես միշտ, նույնպես և այսօր արդիական է:

Հեքիաթն այնպիսի իրական հայելի է,
որի մեջ ամեն մեկն իր պատկերն է տեսնում:





Հետազոտման առարկան է հեքիաթների տեղի ու դերի ուսումնասիրումը տարրական դասարաններում:

Ի՞նչ է հեքիաթը. հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է:

Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով:

Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթի միջոցով: Հեքիաթով սկսվում է երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Եվ այդ ամենը երեխային ներկայացվում է հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և

ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է. խաղ, արկած, հրաշք, ճակատագիր … հեքիաթի թեմաներն անվերջ են:

Կրտսեր դպրոցականների հետ տարվող աշխատանքում մանկավարժները հաճախ են դիմում հեքիաթների և բազմաբնույթ պատմությունների կիրառմանը: Այդ պարագայում նրանք առավել հեշտ են ըմբռնում որևէ նոր նյութ, միտք և ուղղակի ընկղմվում են հեքիաթների հրաշքների մեջ: Դրանք դառնում են մեծահասակ-երեխա փախհարաբերություններն արդյունավետ զարգացնող լավագույն միջոց: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ ու քաջարի հերոսների հետ: Նա իրեն զգում և պատկերացնում է որպես հեքիաթի գործող անձ հերոսների հետ: Հեքիաթային կերպարները, պատկերները և իրադարձությունները հեշտությամբ ամրակայվում են երեխայի հիշողության մեջ և մտապահվում երկար:

Հեքիաթները հորինվել, փոխանցվել են սերնդեսերունդ: Դա կենսափորձի բնական և հուսալի միջոց է :

Հեքիաթների բազմազանության մեջ իրենց ուրույն տեղն ունեն դիդակտիկ /ուսումնական/ հեքիաթները: Դրանք ստեղծվում են մանկավարժների կողմից: Այլ կերպ ասած «փաթեթավորվում է», ուսումնասիրվում նյութը և ավելի գունագեղ և հետաքրքիր ձևով մատուցվում աշակերտներին:

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեքիաթի ուսուցումը նպատակ է հետապնդում գտնել նոր ուղիներ և մեթոդներ դպրոցական տարիքի երեխաների երևակայության զարգացման, և ուսուցման գործունեությունը առավել արդյունավետ զարգացնելու համար:

Եվ այս գործում հեքիաթն իր ուրույն ու ծանրակշիռ տեղն ունի: Այն նպաստում է մանկան երևակայության խթանմանը, հետաքրքրասիրության զարգացմանը և ընթերցասիրության մշակմանը: Հեքիաթի ընթերցանությունն առնչվում է նաև մանկան աշխարհայացքի ձևավորման սաղմերին:

Դեռևս փոքր հասակից երեխան ծանոթանում և սիրում է ժողովրդական հեքիաթները, առակները, շուտասելուկները, սուտասելուկները, սուրասելուկները և հանելուկները:

Ընդհանրապես հեքիաթների ընդերքը հարուստ է ժողովրդական հանճարի լուսավոր փայլատակումներով, որոնք արտահայտվում են թևավոր խոսքերով,

աֆորիզմներով, խրատներով, ասացվածքներով: Այսպես, «Պարծենկոտի մեջը փուտ է, ինչ որ ասի՝ կեսը սուտ է», «Ստի ոտքը կարճ է լինում», «Սուտասանի տունը հրդեհ ընկավ, ոչ ոք չհավատաց», «Քամու բերածը քամին է տանում», «Աշխատող խոփը չի ժանգոտվի», «Խելքը լավ է, քան հարստությունը» «Աշխատանքը զարդարում է մարդուն»: Գարդները «Բազնաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում» գրքում նշում է, որ մարդիկ ի ծնե օժտված են: Նրանց հատուկ են ընկալման և մտածողության բոլոր ձևերը: Սակայն տարբեր մարդկանց մեջ դրանցից մեկը կամ մի քանիսը դրսևորվում են առավել ընդգծված:

Մտածողության այս տեսակների վրա հենվելն ուսուցումը դարձնում է առավել արդյունավետ: Բանն այն է, որ ոչ թե աշակերտն է հարմարվում ուսուցման այս կամ այն ձևին, այլ ուսուցման ձևն է հարմարեցվում աշակերտի ընկալմանը:

Հեքիաթները և ժողովրդական իմաստուն ասացվածքները նպաստում են տարբերակելու աշխատասիրությունը՝ ձրիակերությունից, ակտիվ աշխատանքային գործունեությունը՝ անգործությունից, կախվածությունը՝ թուլամորթությունից: Հեքիաթը միաժամանակ օժանդակում է երեխաների մտավոր զարգացմանը և նրանց դաստիարակում թերությունների նկատմամբ անհաշտության ոգով: Այն օգնում է բացահայտելու ոչ միայն շրջապատի ու ընկերների անկատարությունները, այլև տեսնելու դրանց ծագման պատճառները: Կարևոր է, թե արդյո՞ք կարողանում ենք սովորեցնել պատմել ու վերարտադրել այն, ինչ նրանց կարդացել ենք, կամ իրենք

են կարդացել: Բանն այն է, որ մեծերի պատմած հեքիաթը երեխաների զգացմունքների ու երևակայության վրա նույնքան ուժեղ է ազդում, որքան բնագիրը:

Ուսուցման նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

- Երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն:
- Հեքիաթի դաստիարակչական դերի վերհանում:
- Պարզել, թե ի՞նչ տեղ ու դեր ունեն հեքիաթները տարրական կրթական համակարգում: Եվ նույնականացումը հերոսի հետ հեշտացնում է ապրումների և արժեքների յուրացումը:

Օգնում է երեխային որոշակի ճանապարհ անցնել, հաղթահարել խնդիրներ, բավարարել այնպիսի պահանջմունքներ, որոնք իրական կյանքում երբեմն անհնար էին թվում:

Հայտնի է, որ Հեքիաթները երեխայի հոգում սերմանում են պատկերացումներ բարու ու չարի, կարևորի ու ոչ պիտանիի, կյանքի և մահվան, արդարության և ստի, քաջության և վախկոտության մասին:

Հաճախ միայն հեքիաթների տեսքով է, որ երեխան կարողանում է ծանոթանալ մարդկային կարևորագույն արժեքներին և հասկանալ դրանք: Սա բացատրվում է նրանով, որ մինչև տասը տարեկան երեխաների մոտ գերակայում է «աջ կիսագնդային» մտածողությունը; Իրենց համար կարևոր տեղեկատվությունը երեխաները ընդունակ են հասկանալ, եթե այն տրված է պատկերների ձևով: Իսկ հեքիաթները հեղեղված են դրանցով:

Հեքիաթը կառուցված է անհավատալիի և անհավանականի հիման վրա, և նրանում տեղի ունեցող իրադարձությունները երբեք չեն կարող տեղի ունենալ մեր իրականության մեջ: Սակայն դա չի նշանակում, որ այն ոչ մի կապ չունի մեր իրականության հետ: Այդ կապը երևակայական է:

Ինչպես նշում է Ի. Վաչկովը հեքիաթը դառնում է հանդիպման միջոց և՛ երեխաների, և՛ մեծահասակների համար դեռևս չգիտակցված իրենց սեփական «ես»-ի աշխարհի հետ: Հասկանալի է, արտահայտված են ժողովրդի մտածողության, հոգեբանության ոչ միայն ուժեղ և առաջավոր կողմերը, այլև թույլ և հետամնաց կողմերը:

Հայ ժողովրդական հեքիաթները աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրով և իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն: Դրանք բաժանվում են հիմնականում 3 տեսակի, որոնցից առաջինը կենդանական հեքիաթներն են, երկրորդը հրաշապատում հեքիաթները, իսկ երրորդը իրապատում կամ կենցաղային- երգիծական հեքիաթները:

1. **Կենդանական** _ Այս տեսակի հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից և կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ;. Կենդանական հեքիաթներում բնության երևույթները և կենդանիները անձնավորվում են, մարդակայնացվում: Հեքիաթներում կենդանիները կերպարների միջոցով բացահայտում են կենդանական աշխարհում տիրող գազանային օրենքը՝ ուժեղի դեմ թույլի մղած օրհասական պայքարը, ուժեղը թույլին ուտելու, կենդանիներին բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Այս կարգի հեքիաթներում կենդանիներն ու գազանները մարդկանց հավատարիմ բարեկամներն են;

2. Հրաշապատում - Այս տեսակի մասին խոսելիս պետք է նշել, որ այստեղ գերակշռում է մարդուց դուրս գտնվող հրաշագործ, գերբնական ուժը: Այդ ուժերի առկայությունը պետք է բացատրել օրինակներով: Օրինակ. «Քամու պես արագ վազում է մարդը, դառնում է քար, այնուհետև քարացած մարդը նորից դառնում է մարդ»: Չարին հաղթելու համար մարդը օգնություն է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին: Չէ որ այդ վերմարդկային ուժերը հրաշագործ են: Հրաշք է նաև այն, որ ամբողջ բնությունը օժտված է կերպարանափոխության զորությամբ: Ահա օրինակներից մեկը. «Ձմռանը ծառերը չորանում են, դառնում են վառելու փայտ, գարնանը ինչ որ ուժով, որը մարդուց դուրս է, սկսում են ծաղկել, դալարել: Սա հրաշք է»:

3. Իրապատում կամ կենցաղային_ հեքիաթն անդրադառնում է կյանքի երկու հակադիր կողմերի՝ լուրջ և անլուրջ, իմաստության և հիմարության ճանաչողությանը: Իրական հեքիաթներում դրսևորվում են մարդկային հարաբերություններ: Ռեալիստական հեքիաթի հիմնական թեմաներն են հերոսի ամուսնական հավատարմությունն ու անհավատարմությունը, ծույլ և անաշխատ տղամարդկանց հեգնական կերպարի պատկերումը, խելքի և իմաստության գովասանքը, աշխատանքի և արհեստի գովքը, բախտն ու ճակատագիրը:

Հեքիաթի ուսուցումը կրտսեր դպրոցում խիստ կարևոր է նաև այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստի նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային և երկրային գանձերը: Երեխան հավատում է հրաշքին…

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ժանրերից է: Վասիլ Հարությունյանը գերագնահատելով հեքիաթի դաստիարակչական նշանակությունը, այն անվանել է «ամենատաղանդավոր մանկավարժ» ասելով, որ ամենատաղանդավոր մանկավարժի՝ ժողովրդի հեքիաթը՝ սերունդների անփոխարինելի դասագիրքն է դառնում հազարամյակներ շարունակ: Աշխատավոր ժողովրդի երեխաների դասագիրքը եղել է բանահյուսությունը և առանձնապես ժողովրդական հեքիաթը:

Հնում հեքիաթը եղել է, նույնիսկ, մասնագիտությունների ու արհեստների տարածման միջոց, ինչպես նաև գիտելիքի տարածման կարևոր միջոց: Ժողովրդական հեքիաթը դաստիարակչական միջոց է դառնում իր մի շարք առանձնահատկությունների շնորհիվ: Դրանցից մեկը հեքիաթի սյուժեի պարզությունն ու արկածային լինելն է: Հեքիաթը քողարկված նկարագրություններ չի սիրում, նրանում կան դրական և բացասական հերոսներ,

որոնք իրար դեմ պայքարում են ոչ թե խոսքով, այլ գործով: Այս հանգամանքն օգնում է երեխային իսկույն կողմնորոշվել դեպի իրենց սիրելի հերոսը, հետևել նրա արկածային կյանքին:

«Ինչպես կարող է երեխան չհրճվի՝ տեսնելով, թե ինչպես աղվեսը, պահպանելով իր ցեղի իսկական առանձնահատկությունները՝ խորամանկությունը, նենգությունը, սերը դեպի հավի կամ վայրի թռչնի միսը, խոսում է ամենասովորական բաների մասին, հրավեր է ընդունում և գնում է խնջույքի կամ հարսանիքի, քնում է տախտակի տակ: Նրանց ոգևորում է այն միտքը, որ մարդիկ դառնում են կենդանիներ, կենդանիները՝ մարդիկ, կենդանիներն ու բույսերը մարդու կողքին են կանգնում՝ որպես նրա հավատարիմ ընկերներ և օգնականներ. հենց այս ամենն է նրա խելքովն ու ճաշակովը» - ասել է Ակսել Արստալը:

Ժողովուրդը հեքիաթի ոճի և պատմելաձևի մեջ դրսևորել է իր մանկավարժական ամբողջ տաղանդը: Նա կարողանում է հմտորեն տարբերել գլխավորն ու երկրորդականը , հիմնական գաղափարը հասցնել ունկնդիրների գիտակցությանը: Ժողովուրդը դրական հերոսի մասին ավելի պատկերավոր է խոսում, և այդ պատկերավորությունն արդեն որոշակի վերաբերմունք է մշակում երեխաների մոտ; Հեքիաթի ոճական գլխավոր առանձնահատկությունը, որը հատուկ է միմիայն հեքիաթին, այն է, որ բավական է երեխաները լսեն «եղել է չի եղել». «լինում է չի լինում..». «ժամանակով ժուկով...» կամ «կար չկար... » արտահայտությունը, անմիջապես հասկանում են, որ հեքիաթ է պատմվելու, և որ կախարդական աշխարհի դռներն են բացվելու իրենց առջև:

Հեքիաթների դեմ երբեմն լսվում են նախազգուշացումներ: Չնայած հեքիաթի հակառակորդներն այլևս չեն պնդում, թե հեքիաթը սուտ է. բայց ոչ պակաս է նաև այն առարկությունը հեքիաթի դեմ, թե իբր նրանք ուշացնում են իրականության զգացումի, բնության հասկացողության զգացումը մանկան մեջ. որովհետև հեքիաթային աշխարհը բոլորովին այն չէ, ինչ որ իրականը:

Ասվածին շատերը գաղափարակից չեն: Հեքիաթները պետք է դասել հոգեբանական սնունդի շարքին, որը նա պետք է ընդունի իր զարգացման որոշ շրջանում: Իրականության և հրաշալիքի այդ խառնուրդը համապատասխանում է մանկական բնական պահանջին, ցարգացնում ն շատացնում է , և նա /հանաք-հանաք/ խելք է սովորում այդ գունագեղ պատկերներից:

Ըստ իս՝ իրականությունն ու հեքիաթը փոխկապակցված են, այսինքն կյանքի յուրաքանչյուր էտապ և քայլ արտացոլված է հեքիաթներում ն

հակառակը: Հեքիաթը կյանքը ներկայացնելու մի ինքնատիպ ձև է, ինչքան էլ որ այն վերացական ներկայացվի ;Հեքիաթը երբեք չի կարելի համարել «իրական աշխարհից կտրված», քանի որ հեքիաթր իրականությունը երեխային ներկայացնելու անկրկնելի և ինքնատիպ միջոց է; Իրականության երևույթները «շնչավորված», «ոտք ու ձեռք առած» երեխային հյուր են գալիս հենց հեքիաթներում (կարծում եմ հեքիաթր որպես այդպիսին միակն է), և երեխան, տարբերելով լավը վատից, կեղծը ճշմարիտից, ընկերասիրությունը դավաճանությունից, ինքն է որոշում, թե որ հյուրին պահի, որին հետ ուղարկի ելնելով իր բնույթից ու առանձնահատկություններից: Երեխաները «հեքիաթային աշխարհում» երբեք չեն մոլորվում և իրականությունից չեն կտրվում:

ՀԵՔԻԱԹԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Արդի մանկավարժական խնդիրներից է ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումը, և դրանց կիրառումը սկսել երեխայի ամենավաղ տարիքից: Հեքիաթը լավագույն միջոց է ուսուցման գործընթացում երեխայի մոտ անձնային որակների ձևավորման և զարգացման համար: Եվ հեքիաթները, որոնցում առկա են բարու և չարի, արդարության և անարդարության, պատվի և անպատվության մասին բարոյական գաղափարները, նպաստում են երեխաների մի շարք որակների ձևավորմանը և զարգացմանը:

Հեքիաթի կարևոր դերի մասին Ռոդարին ասել է, որ երեխայի համար հեքիաթն առաջին հերթին մեծահասակին իր կողքին պահելու իդեալական միջոց է: Մայրը, միշտ զբաղված է, քանի դեռ հեքիաթը շարունակվում է, երեխան մայրիկի կողքին է; Մայրն ամբողջովին ն երկար ժամանակ երեխայինն է, իսկ դա իրեն, մայրիկի թևի տակ զգալը, շատ հաճելի է: Երեխան այդ պահին իրեն շատ ապահով և վստահ է զգում:

Եթե մի հեքիաթը լսելուց հետո երեխան պնդում է նորից պատմել, ամենևին էլ չի նշանակում, որ դա իրոք նրան հետաքրքրում է, կամ որ միայն հեքիաթն է նրան հետաքրքրել. միանգամայն հասկանալի է, որ պարզապես ուզում է երկարաձգել բավականությունը, որպեսզի մայրը կամ քույրը, տատիկը... հնարավորին երկար մնա մահճակալի մոտ:

Ես կարծում եմ, որ հեքիաթը, հանդիսանալով ինքնաճանաչման լավագույն միջոց, մեծ հնարավորություններ կարող է տալ նաև ուսուցիչներին՝ իրենց

աշակերտների մոտ բնավորության բազմաթիվ գծեր բացահայտելու կամ իրենց աշակերտներին ճանաչելու համար:

ՀԵՔԻԱԹԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Մենք գիտենք, որ հեքիաթներն իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն երեխայի դաստիարակչական գործում: Դաստիարակությունն ավագ սերնդի կողմից մարդկային փորձի փոխանցումն է մատաղ սերնդին: Եվ այդ փուլը փոխանցվում - մատուցվում է ուսուցանելով:

Դարեր շարունակ մայրիկներն ու տատիկները հեքիաթների միջոցով փոքրերին ներարկեն են սեր՝ բնության, մարդու, հայրենիքի, կենդանիների, ընկերոջ, ծնողի նկատմամբ: Հեքիաթը երեխային ներարկի նաև սեր ուսման նկատմամբ: Այն նպաստում է մանկական երևակայության և հետաքրքրասիրության զարգացմանը, առաջացնում է սեր ընթերցանության նկատմամբ: Ոչ թե պետք է դադարել երեխային հեքիաթ պատմել դպրոց ընդունվելուց հետո, այլ հենց հեքիաթը ծառայեցնել ուսուցման գործընթացին: Պետք է հարթել ուղիներ, որոնք կնպաստեն գիտելիքների ստացմանը, այսինքն կհանդիսանան ուսուցման միջոց: Մենք քաջ գիտակցում ենք, որ երեխային դուր է գալիս, երբ հեքիաթներում բույսերն ու կենդանիները խոսում են, գործում են, օգնում են իրար: Երեխային այդ հեքիաթը պատմելուց հետո, երբ մեծահասակն էլ իր օգնությունն առաջարկի, երեխայի մոտ կամաց-կամաց կմեղմանա ճգնաժամը և քիչ - քիչ կանհետանա: Հեքիաթը կարող է դառնալ ոգեշնչման աղբյուր:

Երբեք պետք չէ սահմանափակվել պատրաստի հեքիաթներով: Ըստ Սուխոմլինսկու հեքիաթներ հորինելը երեխաների համար ստեղծագործական ամենահետաքրքիր տեսակներից է:

Դա մտավոր զարգացման կարևոր միջոց է, երևակայության և ստեղծագործելու կարողության զարգացում: Պետք է պահանջել և առաջարկել, որ հենց իրենք էլ հորինեն հեքիաթներ և դրանք բեմականացնեն և երեխան գոհանա իր ստեղծածով, ինչպես նաև դիտի ու գնահատի իր ընկերների աշխատանքները: Երբ երեխան իր մտքերը ազատ արտահայտելու հնարավորություն է ստանում, դա օգնում է ուսուցչին ավելի լավ ճանաչել երեխային:

Եթե մեզ մեթոդ է պետք, որից պետք է օգտվենք հեքիաթ հորինելու համար, ապա երեխաներին դա պետք չի, քանի որ նրաց ֆանտազիան այնքան վառ է և պատկերավոր, որ ցանկացած պահի կարող են հեքիաթ հորինել: Ըստ Սուխումլինսկու բավական էր ստեղծել և ապահովել աուրա և կհորիվեին նոր հեքիաթներ: Այսինքն, հեքիաթ հորինելու իր միջոցը՝ հեքիաթային միջավայրի և մթնոլորտի ապահովումն էր:

Հեքիաթ հորինելու իր տարբերակն է առաջարկել նաև Ջ. Ռոդարին, այն է՝ հեքիաթի «աղավաղումը»՝գործող անձին կամ բառերը փոխելով: Ոչ թե օր. Կարմիր գլխարկ այլ դեղին, ոչ թե գայլին հանդիպեց, այլ մի ձի տեսավ: Բայց այս մեթոդը ընդունելի է, եթե երեխան հասցրել է հեքիաթի բովանդակությունը մարսել, և նորը ստեղծելու համար ենք դիմում աղավաղման մեթոդին, որ երեխան գիտակցի, որ Կարմի գլխարկից բացի կարող է լինել նաև Դեղինը: Ջ. Ռոդարին առաջարկում է նաև աղավաղման մի ուրիշ տարբերակ՝ հեքիաթային թեման օրգանապես «շուռ տալը»:

Օր.՝ Մոխրոտը՝ անպետք աղջիկը, մեղմ ու բարի խորթ մորը կատաղացնում է և հեզ ու հլու խորթ քույրերի փեսացուին խլում:Սխալի մեթոդը նոր մտքի է բերում, օգնում է երևակայելու: Սա կլուծի ևս մի կարևոր խնդիր: Երեխաները կգիտակցեն, որ խորթ մայրը, խորթ քույրերը և այլ հերոսներ ևս կարող են բարի և խղճով լինել: Դասը կարդալուց հետո պիտի առաջարկենք արդարացնել կամ քննադատել, մեղադրել այս կամ այն հերոսին:

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հեքիաթներն իրենց դասավանդման յուրահատուկ ձևև ունեն, որը պայմանավորված է նրանց ժանրային առանձնահատկությամբ:Հեքիաթներում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միախառնված վիճակում, և դա նրանց ժանրային հիմնական առանձնահատկություններից մեկն է;Դասավանդման ընթացքում հեքիաթների ուսումնասիրությունն այնպես պետք է տանել,որ դրանք թե իրենց փողադարձ միասնության մեջ և թե առանձին հասնեն երեխաների գիտակցությանը;

Հեքիաթի ուսուցման գործընթացն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի

յուրացման և դրանից բխող կրթական դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Երբ սկզբից ևեթ աշակերտներին բացատրում ենք հեքիաթի էությունը, բացահայտում իրականի և անիրականի փոխհարաբերությունը, դրանով, փաստորեն, խիստ թուլացնում ենք հեքիաթի գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, որը նյութի ավանդական հիմնական նպատակներից է: Հեքիաթի գործող անձերի անիրական լինելու մասին ամենափոքր ու ընդհանուր տեղեկությունն իսկ երեխաների մեջ մեռցնում է ակտիվ ուշադրությունն ու հետաքրքրությունը դասի նկատմամբ, որովհետև հեքիաթի ամբողջ արժեքն ու հմայքն էլ հենց այն բանի մեջ է, որ կարողանում է ընթերցողին կտրել, վերացնել իրականությունից և հեքիաթի թևերով տանել երևակայական աշխարհները:

Հեքիաթի տեքստային ուսումնասիրությունն ավարտելուց հետո աշակերտների առաջ պետք է բաց անել տեքստի հեքիաթային քողը, ցույց տալ նրա մեջ եղած իրականն ու անրիականը, ճշմարտապատումն ու երևակայականը, այդ ամենը կատարելով կոնկրետ նյութի վրա, պարզ ու մատչելի ձևով, որպեսզի երեխաները տեսական բացատրությունները կապեն գործնականի հետ, յուրաքանչյուր բառ ու հասկացություն իմաստավորեն կոնկրետ բովանդակությամբ: Այսպես, օրինակ կարելի է աշակերտներին բացատրել, որ, «Երեք արջի հեքիաթը» հեքիաթում աղջկա անտառ գնալը. անտառում մոլորվելը և արջի որջն ընկնելը միանգամայն հնարավոր ու իրական է, իսկ արջին հիմարացնելու ամբողջ պատմությունը՝ մտացածին ու անիրական: Հեքիաթներում եղած իրականի ու անիրականի այս սահմանագծումն ու տարբերակումն զգալի դարձնելու համար հաճախ կարելի է նաև համապատասխան օրինակներ բերել երեխաների արտադասարանային ընթերցանության կամ նախորդ դասարաններում անցած հեքիաթներից:

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքերում տեղ գտած հեքիաթները /իհարկե, ոչ բոլորը/ կարելի է ներկայացնել տիկնիկային թատրոնի բեմադրությունների ձևով: Հեքիաթները հետաքրքիր պատկերների ու երևույթների միջոցով երեխաներին տանում են դեպի անսովոր աշխարհ: Դրանցով ընդարձակում են նրանց մտահորիզոնը և երևակայությունը:

Կարելի է առաջադրել.

1. Նշե՛ք կարդացած հեքիաթներից այն մեկը, որի բովանդակությունը ձեզ ամենից շատ է դուր եկել:

2. Այդ հեքիաթի ո՞ր հերոսին ես ուզում նմանվել և ինչու՞:

3. Գրառե՛ք հեքիաթի գաղափարն արտահայտող ժողովրդական առածներն ու ասացվածքները:

4. Մի հեքիաթ էլ դուք ստեղծեք:

5. Շարունակե՛ք հեքիաթի բովանդակությունը:

6. Ո՞վ է հաղթում այս հեքիաթում:

7. Պատմե՛ք և գտե՛ք հեքիաթի մտադրույթն արտահայտող մի քանի ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

8. Ո՞ր հեքիաթից է վերցված այս հատվածը:

9. Յուրաքանչյուր հեքիաթից առանձնացրեք՝ ա) չարն ու բարին, բ) արդարն ու անարդարը…

10. Ցուցադրե՛ք տարբեր հեքիաթներից հատվածներ (նախապես տարբերակել):

Հեքիաթները դրվատում են բարին ու խարազանում չարը: Դրանք ընդգծում են լույսի ու գիտության կարևորությունը, որևէ արհեստի տիրապետելու անհրաժեշտությունը, փառաբանում են խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, գովաբանում մարդկային նկարագրի լավագույն ու ընդօրինակելի գծերը:

Հեքիաթի միջոցով ընդգծվում է մարդկանց՝ մոլորություններից հեռու պահելու կենսականորեն կարևոր միտումը:

Հեքիաթի որևէ ուշագրավ պահի նկարագրումը կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երևակայությամբ վերապրել հեքիաթի բովանդակությունը: Այստեղ պարզ է, որ խոսքի ու գույների արվեստի միաձուլում է տեղի ունենում: Սա էլ ուսուցման արդյունավետությունը բարձրացնող կարևոր հանգամանքներից է:

• Ուսուցիչը խոսում է հեքիաթի մասին, այնուհետև աշակերտներին հայտնի հեքիաթներից ներկայացվում են մի քանի երկխոսություններ: Երեխաները փորձում են ըստ երկխոսությունների կազմել հաղորդակցությունների սխեմաներ և քարտեզներ:

• Երեխաներին տրվում են հեքիաթի յուրաքանչյուր դրվագին համապատասխանող առանձին նախադասություններ, որոնք պետք է դասավորել ճիշտ և տրամաբանված հերթականությամբ:

• Առաջարկվում է կազմել հեքիաթի կառուցվածքի բուրգ՝ հետևյալ ձևով.

1. հեքիաթի հեղինակը

2. գործող անձի անունը
3. որտեղ է նա գտնվում
4. առաջին դրվագը
5. երկրորդ դրվագը
6. երրորդ դրվագը
7. հանգույցի լուծումը

• Ուսուցիչը պետք է օգնի երեխային, որպեսզի նրա համար տեսանելի դարձնի հեքիաթի կառուցվածքը և իրադարձությունների հաջորդական ընթացքը: Այսպես.

Հեքիաթի կմախքը

Հեքիաթի կմախքը —----------
Հեքիաթի վերնագիրը —----------
Հեքիաթն սկսվում է—----------
Դրանից հետո —----------
Հաջորդը ----------
Իսկ հետո ----------
Հանգույցի լուծումը—----------
Հեքիաթն ավարտվում է —----------
Մի երկու դեպք էլ դու ավելացրու—---------

Այնուհետև աշակերտները գրում են հեքիաթի վերնագիրը, նշում գլխավոր և երկրորդական հերոսներին, գործողության վայրը: Լրացնում են հեքիաթի քարտեզը՝ պահպանելով տրամաբանական կապը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությանը մասնակցել է 32 աշակերտ:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեքիաթի ուսուցողական դերն ու նշանակությունը տարրական դասարաններում»

թեմայի շրջանակներում կատարած եզրակացություններնը հետնյալն են. Հայ ժողովրդական հեքիաթները, աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրով և իրականության արտացոլման եղանակով միասեռ չեն: Դրանցում առկա են՝բարու ու չարի, արդարության և անարդարության, պատվի և անպատվության մասին բարոյական գաղափարներ, որոնք նպաստում են երեխաների մի շարք անձնային որակների ձևավորմանը,ինչպես նաև արդեն ձևավորվածների զարգացմանը: Հաստատ է, որ ուսման հաջողությունն ու առաջընթացը պայմանավորված է ուսուցման կազմակերպման ճիշտ ձևով; Պետք է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկություններն ու հոգեբանական պատրաստվածության ընկալունակությունը; Հեքիաթր չունի կոնկրետ տարածք, կոնկրետ հասցեատեր, չի պատկանում ոչ մի սոցիալական և տարիքային խմբի: Այսօրվա սերունդն էապես տարբերվում է նախորդներից: Հետևաբար՝ ինչ-որ բան պետք է փոխել ուսուցման մատուցման մեջ:Երեխան հեքիաթից է տեղեկություններ ստանում դեռևս իրեն անծանոթ իրականության և շրջապատի մասին: Այսպիսով, հեքիաթը, հանդիսանալով բնավորությունների և ճակատագրերի ծով», լինելով մի լեզու, որով հնարավոր է երեխայի հետ խոսել, ինչպես ասել է Զ. Ռոդարին առանց կոտրատվելու», ոչ միայն դաստիարակության միջոց է, այլ նաև թույլ է տալիս բացահայտել անձի ներքին հնարավորությունները և զարզացնել դրանք, ինչպես նաև հանդիսանում է ուսուցման արդյունավետ միջոց:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ա. Մարգարյան՝ <<Հեքիաթի ուսուցման դերը տարրական դասարաններում>>

Նախաշավիղ 4.2011թ

2.Ա. Դալլաքյան՝ <<Ժողովրդական հեքիաթների ուսուցման արդյունավետությունը>>

Նախաշավիղ 1. 2004թ

3.Ի. Խանամիրյան՝<<Հեքիաթների դերը հոգեկան զարգացման գործընթացում>>

4.Ջ. Ռոդարի՝ <<Ստեղծագործական երևակայության քերականություն>> Երևան 1995թ.

5.Վ.Ա. Սուխոմլինսկի՝ <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>> Երևան 1977թ.